գլուխը մեծ. բարձրայօն աչքերը խոշոր և սեւ, մօրուքն ու ընչացքները թաւ և երկայն, գլխին ունի արքայական ճառագայթանշանակ թագ. ակնառկուռ երախակալով ու պատուանդանով կեռ թուրը դրել է ծնկներին և երկու ձեռքով բռնել, շապիկը սպիտակ է և կողմնական կռճակով, ծիրանեգոյն արխալուխի վերայ հագել է թանգագին շալէ ջուբբա և կարմիր առնդալները դրուած են գահի պատուանդանի վերայ։

— Վերջապէս կարող ենք մի քանի օր էլ լաւ կերակրուել, բացականչեց նկարիչը, և այնուհետեւ Աստուած ողորմած է, երեւի մի բարի մարդ էլ կը գտնուի և մի ուրիշ պատուէր կը տայ։

Նկարիչը հագաւ երկայն վերարկուն, որով ծածկում էր իւր աղքատիկ հագուստները, առաւ նկարը, խնամքով ծածկեց և տարաւ Ֆաթ—ալի խանին։ Նկարիչը ներս հրամցուեց, նկարի ծածկոցը յետ արաւ և ներկայացրեց խանին։ Խանը զմայլած նայեց նկարը, յայտնեց իւր գոհունակութիւնը, որ պատկերը իւր սպասածից շատ լաւ է։ Նկարիչը ուրախացաւ, որ վերջապէս իւր նկարը գնահատուեց։

Խանը կանչից իւր գանձապահին և հրամայեց տալ նկարչին երկու թուման (10 ֆր.)։ Նկարիչը, լսելով 2 թումանի վարձատրութեան մասին, սարսափից շլմեց և անզգայացաւ մի րոպէ. փողը մնաց գանձապահի ձեռքին, իսկ նկարիչը յապուշ կրթած նայում էր խանի երեսն ի վեր։

— Ինչ, միթէ գոհ չես վարձատրութեան համար. դժկամակած ու բարկացած հարցրեց խանը։

— Կատակ էք անում, խան, թէ ծաղրում էք ինձ, պատասխանեց նկարիչը։

— Քաւ լիցի, ինչո՞ւ պիտի ծաղրեմ, չես տեսնում, որ սովորական գնից աւելի եմ վճարում մի նկարի, որ խանութներում 2–3 դրամով (մի ֆրանկ կամ 1,50 ֆր.) կարելի է ձեռք բերել, այն էլ շրջանակով։

— Բայց սա նկարուած է և ոչ թէ տպած, սորա ամեն մի կէտի վերայ թափել եմ աչքիս լոյսը, մտքիս ոյժը և սրտիս կորովը. տարին որ լարունակ գիշեր ու ցերեկ, մտածել ու հոգացել եմ դրա մասին, մեծ երկունքով եմ ծնել, տասն օր պարապել եմ կերակրուել և ձեր տուածի նպաստիկը միմիայն ցամաք հացի եմ տուել ընտանիքս քաղցից ազատելու համար։

— Բաւ, աւելացրու 5 դրամ էլ։ Բայց լաւ իմացիր, որ աւելի վճարում եմ, ի նկատի ունենալով, որ ընտանիք ունիս և տարին թանգ է։

Նկարչի դէմքը կատաղութիւնից շիկնեց, աչքերը լցուեցան արիւնով, երեսի մկանները ձգձգուեցան, լեզուն կարկամեց և ականջները խլացան։ Նորա աչքերը անգիտակցաբար ու կատաղութեամբ արագ դառնում էին մերթ նկարի և մերթ խանի վերայ։ Մի վայրկեանից յետոյ ուշաբերուեց, տեսաւ իրան յուսախաբուած, արուեստը անարգուած ու արհամարհուած։ Արագութեամբ խլեց նկարը խանի ձեռքից, կտոր կտոր արաւ իւր այնքան հոգածութեամբ ու խնամքով շինած գործը. լաւ համարելով ոչնչացնել, քան թէ տեսնել այդպէս ստոր կերպով անարգուած։ Ջայրոյթով դուրս փախաւ խանի տնից, հասաւ տուն և երեսի վերայ ընկնելով հեկեկաց . . . ։

Վ. Բ.

Թաւրիզ 1901։

---

# ՆԱՄԱԿԱՆԻ

ՌՈՍՏՈՎ. — ՄԵԾ. Պ. ՅՈՎՀ. ԳԱԼԵԱՆՑ. — Ուխտիս Երկերիւրամեայ հաստատութեան հանդիսին համար՝ պատուական բաժանորդի ղրկած 500 ֆր.ի նուէրն ընդունեցանք և յանձնեցինք յոբելեանի յանձնաժողովին։ Այս առթիւ հրապարակաւ ընդունեցէք մեր խորին շնորհակալութիւնը։ Յանձնաժողովէն կը ստանաք առանձին պաշտօնական գրութիւն մը։ Ձեր զգայուն և անկեղծ արտայայտութեանց համար ընդունեցէք նոյնպէս խմբագրութեանս շնորհակալիքն։

ԵՐՈՒՍԱՂԷՄ. — ՄԵԾ. Գ. Տ. ՄԵՍՐ. — Ժողովրդական և շինիչ է Ձեր վերջին յօդուածն՝ որ սակայն թերթիս ուղղութենէն դուրս ըլլալով. կը ցաւինք որ չենք կարող հրատարակել։

ԵՐՈՒՍԱՂԷՄ. — Տր Վ. ԳԱԶԳԱՆ. — Ստացանք Ձեր ուղարկածները։

ՓԱՐԻԶ. — «ԲԱՆԱՍԷՐ». — Ստացանց պատասխանն՝ կը տեսնէք 10րդ. պրակին մէջ։

digitised by A.R.A.R.@